

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ �ԱՆԿ» �ԱՑ �ԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 532007, 538904, 8686

Ֆաքս՝ (374 10) 538904




E-mail: bank@aeb.am

Տարեկան հաշվետվություն 2013թ., 30 ապրիլի 2014թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի քանակը՝ 933335
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2500 ՀՀ դրամ

«Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական դիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է բանկը»:

ստորագրող անձինք՝

Ռուբեն Բադալյան	Գործադիր տնօրենի տեղակալ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուբեն Հայրապետյան	Գործադիր տնօրենի տեղակալ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Ազատյան	Գլխավոր հաշվապահ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան	Ռազմավարության և դիսկերի կառավարման վարչության պետ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Առաքելյան	Տարածքային կառավարման վարչության պետ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տարոն Սիմոնյան	Իրավաբանական վարչության պետ		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Նալչյան	Գործադիր տնօրեն		30.04.2014թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



Անկախ աուդիտորի հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև նրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության 31 դեկտեմբերի 2013թ. ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք չձևափոխված կարծիք ենք ներկայացրել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2014թ. ապրիլի 28-ին: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի ազդեցությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով: Հետևաբար՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար
Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից Աուդիտի Միջազգային Ստանդարտ (ԱՄՍ) 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

Կարծիք

Մեր կարծիքով, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք կազմվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության՝ աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, բոլոր էական առումներով համապատասխանում են այդ ֆինանսական հաշվետվություններին, ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն:

Այլ նշում

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2012 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացրել է չձևափոխված աուդիտորական կարծիք 2013թ. ապրիլի 15-ին:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արմինե Դանդուկ
Աուդիտի ղեկավար

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Դելոյթ Արմենիա ՓԲԸ
29 ապրիլի, 2014թ.



«Դելոյթ» տնօրենությունը վերաբերում է կապիտալի անկախությանը: «Դելոյթ» թույլ է օգտագործել «Դելոյթ» բրանդմանկը մոտավոր քննություններ, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների թվում: Երկրորդ կարգի ընտրված մեկ կամ մի քանի կազմակերպություն, որոնցից որոշակիացումը իրենց ներկայացրած է առաջին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ»-ը, ընտրված ֆիրմաների և իրավական կազմակերպությունների մասին տեղեկությունները տրամադրում են համար աղբյուրը՝ www.deloitte.com/about: ԱՊՇՊ «Դելոյթ»-ի իրավական կազմակերպության վերաբերյալ տեղեկությունները տրամադրում են համար աղբյուրը՝ www.deloitte.com/az/about: © 2014 «Դելոյթ» թույլ է օգտագործել «Դելոյթ» բրանդմանկը պաշտպանված է:

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)	Ծան.	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		17,866,741	14,988,251
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		-	20,030
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		2,521,027	5,244,878
Հակադարձ հետգնման պայմանագրեր		1,379,833	1,348,482
Հաճախորդներին տրված վարկեր		40,693,742	33,379,320
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող		2,521,046	864,758
- Հետգնման պայմանագրով գրավադրված		4,624,479	4,037,132
Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում		245,192	262,160
Հիմնական միջոցներ		3,625,023	3,067,514
Ոչ նյութական ակտիվներ		88,497	100,674
Այլ ակտիվներ		597,760	576,529
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԱԿՏԻՎՆԵՐ		74,163,340	63,889,728
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		6,740	8,012
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր		2,522,985	3,559,005
Պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		6,574,534	1,575,613
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ		4,093,722	8,353,140
Հետգնման պայմանագրեր		4,504,784	4,255,724
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		44,391,776	36,240,698
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		147,359	22,455
Հետաձգված հարկային պարտավորություններ		206,396	9,214
Այլ պարտավորություններ		651,495	411,093
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		63,099,791	54,434,954
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ		2,333,338	2,333,338
Գլխավոր պահուստ		5,405,133	5,405,133
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		1,071,594	179,520
Զբաղիված շահույթ		2,253,484	1,536,783
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		11,063,549	9,454,774
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		74,163,340	63,889,728

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. Ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Զավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
Տոկոսային եկամուտ	7,236,646	6,187,823
Տոկոսային ծախս	(3,501,022)	(2,894,434)
Ջուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները	3,735,624	3,293,389
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	(139,918)	(139,590)
Ջուտ տոկոսային եկամուտ	3,595,706	3,153,799
Ջուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	93,863	33,508
Ջուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	909,672	810,961
Կուրսային և այլ վճարումների տեսքով եկամուտներ	1,558,460	1,200,134
Կուրսային և այլ վճարումների տեսքով ծախսեր	(385,398)	(272,851)
Ջուտ օգուտ վճարումների համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	35,623	61,073
Այլ եկամուտ	181,825	146,680
Ջուտ ոչ տոկոսային եկամուտ	2,394,045	1,979,505
Գործառնական եկամուտ	5,989,751	5,133,304
Անձնակազմի գծով ծախսեր	(2,972,299)	(2,343,750)
Հիմնական միջոցների մաշվածություն	(275,104)	(590,644)
Ոչ կյուրաքանակ ակտիվների ամորտիզացիա	(14,563)	(14,056)
Այլ ծախսեր	(1,738,671)	(1,649,508)
Գործառնական ծախսեր	(5,000,637)	(4,597,958)
Ասոցիացված կազմակերպություններում վնասի բաժին	(18,531)	(37,481)
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը	970,583	497,865
Շահութահարկի գծով ծախս	(253,882)	(152,380)
Տարվա շահույթ	716,701	345,485
Այլ համապարփակ եկամուտ		
Հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա միավորներ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	923,498	192,364
Շահույթի կամ վնասի փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	(32,987)	(95,611)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ճանաչված արդյունքի ներդրողի բաժնեմաս, աղ թվում		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	1,563	967
Շահույթի կամ վնասի փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	(326)
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ, հարկերից հետո	892,074	97,394
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	1,608,775	442,879
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	0.77	0.37
Բազային և նոսրացված		

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. նոյեմբերի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն

Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ





Մեխանիկական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի պահուստ	Զբաղված Շահույթ	Շեղումներ
Մնացորդը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ	2,333,338	5,405,133	82,126	1,401,298	9,221,895
Շեղումներ համապարփակ եկամուտ					
Տարվա շահույթ	-	-	-	-	-
Այլ համապարփակ եկամուտ հարկերից հետո	-	-	345,485	345,485	345,485
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	192,364	-	192,364
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	(95,611)	-	(95,611)
Բաժնետնտեսության մեթոդով հաշվառվող ստացիալական կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ճանաչված արդյունքի ներդրումի բաժնեմաս, այլ թվում	-	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	967	-	967
Շահույթին կամ վնասին փոխանցված՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո	-	-	(326)	-	(326)
Շեղումներ այլ համապարփակ եկամուտ	-	-	97,394	-	97,394
Շեղումներ հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	97,394	345,485	442,879
Հայտարարված շահաբաժիններ	-	-	(210,000)	(210,000)	(210,000)
Մնացորդը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,333,338	5,405,133	179,520	1,536,783	9,454,774



Հայկերմոբայի ԲԲԸ

(Խազար դրամ)

Հաշվետու տարվա շահույթ
Այլ համապարփակ եկամուտ, հարկերից հետո
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական
արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո
Շահույթին կամ վնասին փոխանցված վաճառքի համար
մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ
փոփոխություն, հարկերից հետո
Բաժնեկապալության մեթոդով հաշվառվող առաջիկայով
կազմակերպության այլ համապարփակ արդյունքում ճանաչված
արդյունքի ներդրողի բաժնեմաս, այլ թվում
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական
արժեքի գուտ փոփոխություն, հարկերից հետո
Շնորհմենք այլ համապարփակ եկամուտ
Շնորհմենք հաշվետու տարվա համապարփակ եկամուտ
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Բաժնեկապալության կապիտալ	Գլխավոր պայմանագրեր	Վաճառքի համար մատչելի պայմանագրեր	Չբաշխված շահույթ	Շնորհմենք
-	-	-	716,701	716,701
-	-	-	-	-
-	-	923,498	-	923,498
-	-	(32,987)	-	(32,987)
-	-	1,563	-	1,563
-	-	892,074	-	892,074
-	-	892,074	716,701	1,608,775
2,333,338	5,405,133	1,071,594	2,253,484	11,063,549

Ամենամյա ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2014թ. Ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն



Դավիթ Ազատյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)	2013թ.	2012թ.
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Տարվա շահույթ	716,701	345,485
Շահութահարկի գծով ծախս	253,882	152,380
Ոչ դրամական հոդվածների ճշգրտումներ՝		
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	139,918	139,590
Մաշվածություն և ամորտիզացիա	289,667	604,700
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(9,785)	(4,367)
Եկամուտ դրամաշտրիններից	(507)	(507)
Արտարժույթի փոխանակման գործարքներից զուտ վնասներ	131,981	56,267
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ	(35,623)	(22,242)
Ասոցիացված կազմակերպություններում վնասի բաժին	18,531	37,481
Այլ եկամուտ	5,408	4,395
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից, նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները	1,510,173	1,313,182
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ		
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,713,116	(486,198)
Հաճախարձ հետգնման պայմանագրեր	(31,351)	(1,348,842)
Հաճախորդների տրված վարկեր	(7,380,539)	(3,511,354)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	20,030	(20,030)
Այլ ակտիվներ	(33,178)	116,005
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,079,750	(1,654,247)
Հետգնման պայմանագրեր	249,060	751,852
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	7,894,502	3,744,308
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(1,272)	(2,281)
Այլ պարտավորություններ	233,832	(50,729)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից, մինչև շահութահարկը	10,254,123	(1,148,334)
Վճարված շահութահարկ	(154,424)	(291,276)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	10,099,699	(1,439,610)
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԿՐՈՒՄԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(2,280,209)	(4,188,527)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրացումից ստացված միջոցներ	1,155,323	2,426,393
Հիմնական միջոցների ձեռքբերումներ	(841,917)	(471,386)
Հիմնական միջոցների վաճառքից ստացված միջոցներ	19,359	4,985
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,656)	(6,197)
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	-	(25,000)
Ներդրում մային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(1,950,100)	(2,259,732)



(հազար դրամ)

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերի մարում

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում

Վճարված շահաբաժիններ

Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր

Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ՁՈՒՏ ԱՃ/ԼՎԱՋՈՒՄ**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ ՏԱՐԵՄԿՁԲԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ****ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ****Լրացուցիչ տեղեկություններ**

Ստացված տոկոսներ

Վճարված տոկոսներ

Ծան.	2013թ.	2012թ.
	(1,036,018)	(82,451)
	(4,328,859)	(662,019)
	(6,582)	(203,227)
	(5,371,459)	(947,697)
	100,350	302,403
	2,878,490	(4,344,636)
14	14,988,251	19,332,887
14	17,866,741	14,988,251
	7,255,832	6,198,605
	(3,527,539)	(2,899,032)

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. ապրիլի 29-ին Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի կողմից:

Արմեն Նալչյան
Գործադիր տնօրեն



Գրավոր Ազատյան
Գլխավոր հաշվապահ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու տարվա գործունեությունը գնահատելով՝ փաստենք, որ, բանկը որդեգրած ռազմավարության հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության համակարգի բարձր մակարդակի և ռիսկերի կառավարման օպտիմալ ռազմավարության ընտրության շնորհիվ կարողացավ դիմակայել զարգացման մարտահրավերներին, ապահովվեց գործունեության հիմնական ցուցանիշների աճ և կարևոր որակական տեղաշարժեր:

Կարևորվում է բանկի՝ որպես ունիվերսալ կառույցի զարգացման ռազմավարության շարունակականությունը, որը կապահպանվի նաև ապագայում:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման, ինչպես նաև հաշվետու տարում ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Հաշվետու տարին արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության առումով. ընդլայնվեցին գործող ծրագրերը և ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

2013թ. մատուցված նոր ծառայություններից հատկանշական է այն, որ Բանկը ներդրեց ոսկու ստանդարտացված ձուլակտորների ապառիկ վաճառքի պրոդուկտը, «Golden Money Transfer» վճարահաշվարկային համակարգով փոխանցված գումարները շահառուներին առաքելու ծառայությունը, արտարժույթով ռեպո գործիքը, սկսեց թողարկել «VISA classic plus» քարտ՝ վարկային գծի առավել շահավետ պայմաններով, սկսեց սոցիալական փաթեթի հաշվիների սպասարկումը և այդ հաշիվներին չվերականգնվող վարկային գծերի տրամադրումը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի արդյունավետ զարգացող օղակներից մեկը, որը վերջին տասնվեց տարիներին գործել է շահույթով: Նշվածը հատկանշական է, հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ընդհանուր իրավիճակը և բանկային համակարգում դրսևորված միտումները:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն դիրքերն ունի թե արտարժույթային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր ձևերի, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկում ռիսկերի կառավարման մշակույթը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից:

Բանկում ձևավորված ռիսկերի կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման հերթական փուլը Բանկի գործունեության և այն կանոնակարգող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումն էր ISO/IEC 27001:2005

(Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի պահանջներին, որը հաջողությամբ ավարտվեց 2013թ.-ին:

Ռիսկերի կառավարումը էական նշանակություն ունի և՛ առանձին բանկերի, և՛ բանկային համակարգի կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով զարգացման գործընթացում, ուստի գնալով ավելի է կարևորվում արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը առանձին բանկերում և բանկային համակարգում: Ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությունը բանկում պայմանավորված է միջազգայնորեն ընդունված ռիսկերի կառավարման ստանդարտների և լավագույն փորձի տեղայնացման հնարավորություններով և ներդրման գործընթացի արդյունավետությամբ:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով սահմանվում են ռիսկերի ընդունելի մակարդակները և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը, որոնք Բանկի ղեկավարության կարծիքով կապահովեն առաջադրված ընթացիկ և ռազմավարական խնդիրների իրականացումը և Բանկի կայուն զարգացումը:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ռիսկերի կառավարման գործընթացում ներգրավված են Բանկի կառավարման մարմինները, ղեկավարները և բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները՝ ռազմավարական խնդիրների սահմանման, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի, ծրագրերի մշակման ընթացքում ռիսկերի բացահայտման, ինչպես նաև բանկային գործառնությունների կատարման ընթացքում դրանց հսկողության իրականացման միջոցով:

Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատումն իրականացվում է տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, առանձին բիզնես-ուղղությունների և ռիսկատեսակների գծով տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա:

Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող մաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Վարվող ճկուն տոկոսադրույքային քաղաքականությունը հնարավորություն է ընձեռում բարձրացնել անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովման գործընթացի արդյունավետությունը և նվազեցնել ռիսկայնությունը՝ հաշվի առնելով ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացիան:

Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի

գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները:

Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են: Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից աշխատանքներ են իրականացվում ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանության և գործընթացների համակողմանի, բազմամակարդակ վերլուծության և կատարելագործման ուղղությամբ:

Համախառն ռիսկի գնահատման և կառավարման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է ընձեռում միկրո մակարդակի ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա իրականացնելու Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության մակարդակի գնահատումը: Վերոնշյալ տնտեսամաթեմատիկական մոդելի շրջանակներում Բանկի համախառն ռիսկը կառավարվում է արտարժույթային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով: Ռիսկերի էական մակարդակները վերանայվում են ըստ անհրաժեշտության՝ ելնելով Բանկի ռազմավարական նպատակներից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից, ինչպես նաև միջավայրի այլ փոփոխություններից:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժույթային ռիսկ,
- գնային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել վարկային ռիսկը որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով

նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկի տրամադրման հիմնավորված որոշումների կայացմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Մշակված սթրես թեստերի տարբեր սցենարների միջոցով իրականացվում է վարկային ռիսկի գնահատում՝ հաշվարկելով որոշակի շոկային իրավիճակների ազդեցությունը բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և համարժեքության նորմատիվների վրա, գնահատվում են նորմատիվների խախտման հնարավորությունը և չափերը, պահուստաֆոնդ փոխանցման ենթակա հավելյալ գումարի չափը: Վարկային պորտֆելի ռիսկայնությունը գնահատվում է տարբեր հնարավոր սցենարների վերլուծության և առավել հավանական սցենարների դիտարկման միջոցով, որի արդյունքների հիման վրա ձեռնարկվում են ռիսկայնության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ: Սցենարային վերլուծություններում դիտարկվում են ինչպես ներքին գործոններ (հիմնական կապիտալից նվազեցումներ, ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքային փոփոխություններ և այլն), այնպես էլ արտաքին գործոններ (սղաճ, միջոցների արտահոսք և այլն): Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության՝ որպես վարկային ռիսկի յուրօրինակ գնահատականի վերաբերյալ:

Բանկում վարկային ռիսկը գնահատվում է նաև պորտֆելի դիվերսիֆիկացման տեսանկյունից: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման աստիճանը գնահատվում է տարբեր չափանիշների վրա հիմնված կենտրոնացումների հաշվարկման միջոցով, որի արդյունքում Բանկի ղեկավարությանը համապատասխան հաշվետվությունների միջոցով տեղեկատվություն է ներկայացվում վարկային պորտֆելի՝ ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ըստ մասնաճյուղերի, ըստ վարկերի խոշորության աստիճանի, ինչպես նաև ըստ արժույթների քանակային և ծավալային կենտրոնացումների վերաբերյալ՝ ապահովելով վարկերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պորտֆելի դիվերսիֆիկացման գործոնի ներառումը: Մոդելի կիրառմամբ հաշվարկվում են նաև ըստ մասնաճյուղերի՝ միջին վարկի ծավալները, վարկերի միջին կշռված տոկոսադրույքներն ըստ խոշորության խմբերի, վարկերի խոշորության աստիճանը բնութագրող ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել մասնաճյուղերի վարկային պորտֆելիների համեմատական գնահատում՝ հաշվի առնելով նաև մասնաճյուղի տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակը և մասնաճյուղի ռեսուրսային հնարավորությունները:

Դասակարգված արտարժույթային վարկերի մնացորդների նշանակալի շեմի սահմանման, ինչպես նաև վարկային պորտֆելում դասակարգված արտարժույթային և դրամային վարկերի մնացորդների և քանակների հարաբերակցությունների սահմանափակման միջոցով իրականացվում է արտարժույթային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկի նկատմամբ հսկողություն և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են վերջինիս զսպմանն ուղղված միջոցառումներ:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

Նշված մոդելները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվում է տոկոսադրույքների փոփոխության՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա ազդեցության սցենարային վերլուծություն, ինչպես նաև սթրես թեստավորում, որոնց արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում և այլ հաշվետվություններում: Ֆինանսական շուկայում տոկոսադրույքների փոփոխման ընդհանուր միտվածության և վերոնշյալ մոդելների գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա միջոցառումներ են ձեռնարկվում ըստ ժամկետայնության ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալների արդյունավետ հարաբերակցությունների ապահովման ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով ակտիվա-պասիվային համամասնությունների ընթացիկ կառուցվածքին համապատասխանող տոկոսադրույքի փոփոխման ռիսկը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Բանկում իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացվում է ակտիվա-պասիվային գործառնությունների՝ ըստ ժամկետների և ծավալների տեղաբաշխվածության կարգավորման և օրական դրամական հոսքերի համապատասխանեցման միջոցով՝ պահպանելով իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցությունը: Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը

հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Սթրես թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունները և դրանց խախտման հավանականությունը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և վերջիններիս խախտման հավանականությունները:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները՝ կիրառելով մշակված կենտրոնացումների գործակիցները և հաճախորդների միջև ավանդների բաշխվածության վերլուծական գրաֆիկները: Մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվում է նաև սթրես թեստերի սցենարային վերլուծություն, որը ներառում է խոշորագույն 10% հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի ազդեցությունները նորմատիվների վրա, ինչպես նաև հաճախորդների վերոհիշյալ չորս խմբերից (ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ցպահանջ ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք) յուրաքանչյուրի 1%-ի ավանդների արտահոսքի գումարային ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա: Իրացվելիության կառավարման շրջանակներում դիտարկվում են նաև որոշակի շեմային ծավալից ավելի միջոցներ ներդրած խոշոր իրավաբանական և ֆիզիկական անձ առանձին հաճախորդների, ինչպես նաև դրանց խմբերի միջոցների արտահոսքի սցենարային վերլուծությունները, որի արդյունքում ևս գնահատվում է միջոցների արտահոսքի ազդեցությունը նորմատիվների ընթացիկ մակարդակների վրա:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես

թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Դիտարկվում են՝ ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության տարբերակ, որի դեպքում հնարավոր վնասը կկազմի առավելագույնը:

Արտարժույթային ռիսկի կառավարման նպատակով կիրառվող VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը: Մոդելի համար մուտքային տվյալներ են հանդիսանում փոխարժեքների վերջին 1 տարվա ժամանակային շարքի վարիացիայի ցուցանիշները և Բանկի արտարժույթային ակտիվների և պարտավորությունների ծավալները: Մոդելը հնարավորություն է տալիս գնահատել առանձին արտարժույթների գծով և ընդհանուր արտարժույթային ակտիվների և պարտավորությունների փաթեթի գծով առկա ռիսկի (հնարավոր առավելագույն վնասի) չափը որոշակի հուսալիության մակարդակով, որը հիմք է հանդիսանում արտարժույթով ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը Բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Բանկի արտարժույթային քաղաքականությունը միտված է արտարժույթային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- հնարավոր կորուստների գնահատում,
- հեջավորման գործիքների կիրառում,

- ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Գործառնական ռիսկ

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնությունը պարունակում է որոշակի մակարդակի գործառնական ռիսկ, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը բանկերի համար: Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ (հնարավորություն)՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով:

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառնությունների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Գործառնական ռիսկը դասակարգվում է.

- Բանկի կառուցվածքի ռիսկ,
- Գործընթացի ռիսկ,
- Մարդկային ռիսկ (ներքին),
- Մարդկային ռիսկ (արտաքին խարդախություն),
- Տեխնիկական ռիսկ,
- Իրավական ռիսկ,
- Ֆիզիկական միջամտության ռիսկ:

Բազել II համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ գործառնական ռիսկի գծով կորուստների վերաբերյալ տվյալների բազայի (կորուստների դեպքերի, դրանց չափերի, պատճառների և այլ ռեկվիզիտների վերաբերյալ) հիման վրա իրականացվում է կորուստների պատճառների և չափերի ամփոփ վերլուծություն՝ հետազայում դրանց հնարավորինս բացառման կամ ի հայտ գալու հավանականության նվազագույն մակարդակի ապահովմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման նպատակով:

Բանկի հիմնական բիզնես-գործընթացների նկարագրման սխեմատիկ մոդելների հիման վրա իրականացվում է բիզնես-գործընթացների յուրաքանչյուր քայլի հնարավոր

ռիսկերի և բացասական իրադարձությունների բացահայտում, նույնականացում և գնահատում, ինչպես նաև սահմանվում են դրանց կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Գործառնական ռիսկի կառավարման շրջանակներում ենթադրվում է նաև կորուստների նվազեցմանն ուղղված ապահովագրական միջոցառումների ուսումնասիրում, գնահատում և ներդրում՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը:

Ստորև ներկայացնենք բանկի տարեկան գործունեության արդյունքների և ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ակտիվների կառուցվածքը, երկու տարվա համեմատականով, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 1

(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ		31.12.2012	Տեսակարար կշիռը (%)	31.12.2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,988,251	23.46	17,866,741	24.09	2,878,490	19.20
2	Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,244,878	8.21	2,521,027	3.40	-2,723,851	-51.93
3	Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,348,482	2.11	1,379,833	1.86	31,351	2.32
4	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	20,030	0.03	0	-	-20,030	-100.00
5	Հաճախորդներին տրված վարկեր	33,379,320	52.25	40,693,742	54.87	7,314,422	21.91
6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						
	- Բանկի կողմից պահվող	864,758	1.35	2,521,046	3.40	1,656,288	191.53
	- Հետգնման պայմանագրով գրավադրված	4,037,132	6.32	4,624,479	6.24	587,347	14.55
7	Ներդրումներ ասոցացված կազմակերպություններում	262,160	0.41	245,192	0.33	-16,968	-6.47
8	Հիմնական միջոցներ	3,067,514	4.80	3,625,023	4.89	557,509	18.17
9	Ոչ նյութական ակտիվներ	100,674	0.16	88,497	0.12	-12,177	-12.10
10	Այլ ակտիվներ	576,529	0.90	597,760	0.81	21,231	3.68
	Ընդամենը ակտիվներ	63,889,728	100.00	74,163,340	100.00	10,273,612	16.08

Բանկի ակտիվների կառուցվածքը, նախորդ տարվա համեմատ, փոփոխվել է հետևյալ կերպ.

- «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 0.63 տոկոսային կետով,
- «Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 4.81 տոկոսային կետով,
- «Հակադարձ հետգնման պայմանագրեր» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.25 տոկոսային կետով,
- «Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.03 տոկոսային կետով,
- «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 2.62 տոկոսային կետով,
- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 1.97 տոկոսային կետով,
- «Ներդրումներ ասոցացված ընկերությունում» հոդվածի տեսակարար կշիռը կազմել է 0.33 տոկոսային կետ,
- «Հիմնական միջոցներ» հոդվածի տեսակարար կշիռն աճել է 0.09 տոկոսային կետով,
- «Ոչ նյութական ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.04 տոկոսային կետով,
- «Այլ ակտիվներ» հոդվածի տեսակարար կշիռը նվազել է 0.09 տոկոսային կետով:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ բանկի ակտիվները, նախորդ տարվա համեմատ, աճել են 10,273.6 մլն. դրամով կամ 16.1%-ով, ընդ որում՝

- «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածն աճել է 2,878.5 մլն. դրամով կամ 19.2%-ով՝ կազմելով 17,866.7 մլն. դրամ,
- «Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» հոդվածը նվազել է 2,723.9 մլն. դրամով կամ 51.9%-ով՝ կազմելով 2,521.0 մլն. դրամ,
- «Հակադարձ հետգնման պայմանագրեր» հոդվածն աճել է 31.4 մլն. դրամով կամ 2.3%-ով՝ կազմելով 1,379.8 մլն. դրամ,
- «Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ» հոդվածն աճել է 7,314.4 մլն. դրամով կամ 21.9%-ով՝ կազմելով 40,693.7 մլն. դրամ,
- «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» հոդվածն աճել է 2,243.6 մլն. դրամով կամ 45.8%-ով՝ կազմելով 7,145.5 մլն. դրամ,
- «Ներդրումներ ասոցացված ընկերությունում» հոդվածը կազմել է 245.2 մլն դրամ,
- «Հիմնական միջոցներ» հոդվածն աճել է 557.5 մլն. դրամով կամ 18.2%-ով՝ կազմելով 3,625.0 մլն. դրամ,
- «Ոչ նյութական ակտիվներ» հոդվածը նվազել է 12.2 մլն. դրամով կամ 12.1%-ով՝ կազմելով 88.5 մլն. դրամ,
- «Այլ ակտիվներ» հոդվածն աճել է 21.2 մլն. դրամով կամ 3.7%-ով՝ կազմելով 597.8 մլն. դրամ:

Ի լրումն ակտիվների վերը ներկայացված կառուցվածքի, պետք է նշենք, որ բանկերի ակտիվների իրացվելիությունը հսկվում և կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան նորմատիվների միջոցով:

Հաշվետու տարվա արդյունքներով, բանկը գերազանցել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների պահանջվող մակարդակները, որը հանդիսանում է հուսալիության, արդյունավետ գործունեության կարևորագույն նախապայմանը՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ:

Բանկի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների մեծությունները արտացոլված են ստորև բերվող աղյուսակում.

Աղյուսակ 2

Ցուցանիշ	31.12.12		31.12.13	
	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ կողմից սահմանված թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն	ՀՀ ԿԲ կողմից սահմանված թույլատրելի մեծություն
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների միջև նվազագույն հարաբերակցություն (ընդհանուր իրացվելիություն)	31.30%	15.00%	30.2%	15.00%
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն (ընթացիկ իրացվելիություն)	86.61%	60.00%	92.4%	60.00%

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ, նախորդ տարվա համեմատ, բանկի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը նվազել է 1.1, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշն աճել՝ 5.79 տոկոսային կետով:

Բանկի պարտավորությունների կառուցվածքը, երկու տարվա համեմատականով, արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 3

(հազ. դրամ)

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		31.12.2012	Տեսակարար կշիռը (%)	31.12.2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	3,559,005	6.54	2,522,985	4.00	-1,036,020	-29.11
2	Պարտավորություններ բանկերի և	1,575,613	2.89	6,574,534	10.42	4,998,921	317.27

	Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ						
3	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	8,353,140	15.35	4,093,722	6.49	-4,259,418	-50.99
4	Հետզնման պայմանագրեր	4,255,724	7.82	4,504,784	7.14	249,060	5.85
5	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	8,012	0.01	6,740	0.01	-1,272	-15.88
6	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	36,240,698	66.58	44,391,776	70.35	8,151,078	22.49
7	Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	22,455	0.04	147,359	0.23	124,904	556.24
8	Հետաձգված հարկային պարտավորություններ	9,214	0.02	206,396	0.33	197,182	2140.03
9	Այլ պարտավորություններ	411,093	0.76	651,495	1.03	240,402	58.48
	Ընդամենը պարտավորություններ	54,434,954	100.0	63,099,791	100.00	8,664,837	15.92

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ նախորդ տարվա համեմատ, բանկի պարտավորություններն աճել են 8,664.8 մլն. դրամով կամ 15.9%-ով, ընդ որում.

- ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերը նվազել են 1,036.0 մլն. դրամով կամ 29.11%-ով՝ կազմելով 2,523.0 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 2.54 տոկոսային կետով,
- Բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն աճել են 4,998.9 մլն. դրամով կամ ավելի քան 4.17 անգամ՝ կազմելով 6,574.5 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում աճել է 7.53 տոկոսային կետով,
- Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդները նվազել են 4,259.4 մլն. դրամով կամ 51.0%-ով՝ կազմելով 4,093.7 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 8.86 տոկոսային կետով,
- Հետզնման պայմանագրերն աճել են 249.1 մլն. դրամով կամ 5.85%-ով՝ կազմելով 4,504.8 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում նվազել է 0.68 տոկոսային կետով,
- Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները հաշվետու տարում կազմել են 6.7 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում կազմել է 0.01%,

- Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 8,151.1 մլն. դրամով կամ 22.49%-ով՝ կազմելով 44,391.8 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում աճել է 3.77 տոկոսային կետով,
- Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններն աճել են 124.9 մլն. դրամով կամ ավելի քան 6.56 անգամ՝ կազմելով 147.4 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում աճել է 0.19 տոկոսային կետով,
- Հետաձգված հարկային պարտավորություններն աճել են 197.2 մլն. դրամով կամ 22.4 անգամ՝ կազմելով 206.4 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում աճել է 0.31 տոկոսային կետով
- Այլ պարտավորություններն աճել են 240.4 մլն. դրամով կամ 58.5%-ով՝ կազմելով 651.5 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը պարտավորություններում աճել է 0.27 տոկոսային կետով:

Ժամկետային ավանդներ

Ի տարբերություն ցպահանջ ավանդների, ժամկետային ավանդների ներգրավումն առավել կառավարելի է, կախված տարվող տոկոսադրույքային քաղաքականությունից:

Այսպիսով, պետք է նշենք, որ բանկի ժամկետային ներգրավումները /ներառյալ բանկերից, ֆինանսական կազմակերպություններից/, նախորդ տարվա համեմատ, աճել են 7,798.7 մլն. դրամով կամ 22.9%-ով՝ կազմելով 41,844.3 մլն. դրամ: Ժամկետային ներգրավումների կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 4

(հազ. դրամ)

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		31.12.2012	Տեսակարար կշիռը (%)	31.12.2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Իրավաբանական ան- ձանց ժամկետային ա- վանդներ	3,278,336	9.63	5,308,581	12.69	2,030,245	61.93
2	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ	13,830,449	40.62	18,839,668	45.02	5,009,219	36.22
3	ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	3,559,005	10.45	2,522,985	6.03	-1,036,020	-29.11
4	Պարտավորություններ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,575,613	4.63	6,574,534	15.71	4,998,921	317.27
5	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	7,546,471	22.17	4,093,722	9.78	-3,452,749	-45.75
6	Հետգնման պայմանագրեր	4,255,724	12.50	4,504,787	10.77	249,063	5.85
Ընդամենը ժամկետային		34,045,598	100.0	41,844,277	100.00	7,798,679	22.91

պարտավորություններ						
--------------------	--	--	--	--	--	--

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ բանկի ժամկետային ներգրավումների կառուցվածքում, նախորդ տարվա համեմատ, տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներն աճել են 2,030.3 մլն. դրամով կամ 61.9%-ով՝ կազմելով 5,308.6 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում՝ 3.06 տոկոսային կետով,
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն աճել են 5,009.2 մլն. դրամով կամ 36.2%-ով՝ կազմելով 18,839.7 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում՝ 4.40 տոկոսային կետով,
- ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկերը նվազել են 1,036.0 մլն. դրամով կամ 29.1%-ով՝ կազմելով 2,523.0 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում՝ 4.42 տոկոսային կետով,
- Բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն աճել են 4,998.9 մլն. դրամով կամ մոտ 4.2 անգամ՝ կազմելով 6,574.5 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում աճել է 11.08 տոկոսային կետով,
- Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդները նվազել են 3,452.8 մլն. դրամով կամ 45.8%-ով՝ կազմելով 4,093.7 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում նվազել է 12.39 տոկոսային կետով,
- Հետզնման պայմանագրերն աճել են 249.1 մլն. դրամով կամ 5.9%-ով՝ կազմելով 4,504.8 մլն. դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդամենը ժամկետային պարտավորություններում նվազել է 1.73 տոկոսային կետով:

Վերլուծելով ընթացիկ տարվա արդյունքները, նշենք, որ բանկի սեփական կապիտալը, նախորդ տարվա համեմատ, աճել է 1,608.8 մլն դրամով կամ 17.02%-ով, ներքին աղբյուրի՝ ձևավորած շահույթի հաշվին և վերազնահատման պահուստների հաշվին:

Բանկի կապիտալի կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 5

(հազ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		31.12.2012	Տեսակարար կշիռը (%)	31.12.2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Կանոնադրական կապի- տալ	2,333,338	24.68	2,333,338	21.09	-	-
2	Ընդհանուր կապիտալ, այդ թվում	9,454,774	100.00	11,063,549	100.00	1,608,775	17.02
2.1	Հիմնական կապիտալ	9,275,254	98.10	9,991,955	90.31	716,701	7.73
2.2	Լրացուցիչ կապիտալ	179,520	1.90	1,071,594	9.69	892,074	496.92

Բանկի ընդհանուր կապիտալի մանրամասն կառուցվածքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 6

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	31.12.2012	31.12.2013
Բաժնետիրական կապիտալ	24.68%	21.09%
Գլխավոր պահուստ	57.17%	48.86%
Այլ պահուստներ	1.90%	9.69%
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	3.65%	6.48%
Նախորդ ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	12.60%	13.89%
Ընդամենը կապիտալ	100.0%	100.0%
Ընդամենը կապիտալ /մլն. դրամ/	9,454.8	11,063.6
Մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը /դրամ/	10,130.1	11,853.8

Աղյուսակի տվյալները վկայում են հաշվետու տարում ընդհանուր կապիտալի կառուցվածքի որոշակի փոփոխության մասին:

Աճել են.

- Նախորդ ժամանակաշրջանի շահույթի տեսակարար կշիռը՝ 1.29 տոկոսային կետով,
- Այլ պահուստների տեսակարար կշիռը՝ 7.79 տոկոսային կետով,
- Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի տեսակարար կշիռը՝ 2.83 տոկոսային կետով,

Նվազել են.

- Գլխավոր պահուստի տեսակարար կշիռը՝ 8.31 տոկոսային կետով,
- Կանոնադրական կապիտալի տեսակարար կշիռը՝ 3.59 տոկոսային կետով:

Գլխավոր պահուստի և կանոնադրական կապիտալի տեսակարար կշիռների նվազումը պայմանավորված է վերջիններիս ծավալների անփոփոխ մակարդակի պայմաններում շահույթի և վերագնահատման պահուստների հաշվին ընդամենը կապիտալի աճով:

Բանկի ընդհանուր կապիտալի աճի արդյունքում, բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը 31.12.13թ. դրությամբ (933,335 հատ բաժնետոմս) կազմել է 11,853.8 դրամ՝ աճելով 1723.7 դրամով կամ 17.0%-ով:

Հաշվետու, ինչպես և նախորդ ֆինանսական տարիների ընթացքում բանկի եկամտի ավելի քան 80%-ը ապահովվել է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների հաշվին, որոնց հիմնական մասը կազմում են վարկային և արժեթղթերում ներդրումներից, արտարժույթային գործառնություններից և մատուցված ծառայություններից ստացված եկամուտները: Բանկի ընդամենը ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ոչ տոկոսային ծախսերին: Բանկի արդյունավետ ֆինանսատնտեսական գործունեության կարևորագույն գրավականը նրա ծախսերի օպտիմալ կառուցվածքի ապահովումն է:

Աղյուսակ 7

(հազ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2012	2013	Աճ/նվազում	
			դրամ	%
Տոկոսային եկամուտ	6,187,823	7,236,646	1,048,823	16.95
Տոկոսային ծախս	2,894,434	3,501,022	606,588	20.96
Զուտ տոկոսային եկամուտ	3,293,389	3,735,624	442,235	13.43
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,200,134	1,558,460	358,326	29.86
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	272,851	385,398	112,547	41.25
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	927,283	1,173,062	245,779	26.51
Զուտ եկամուտ արտարժույթային գործառնություններից	810,961	909,672	98,711	12.17
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	33,508	93,863	60,355	180.12
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	61,073	35,623	-25,450	-41.67
Այլ եկամուտներ	146,680	181,825	35,145	23.96
Տոկոսադիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	(139,590)	(139,918)	-328	0.23
Անձնակազմի գծով ծախսեր	2,343,750	2,972,299	628,549	26.82
Հիմնական միջոցների մաշվածություն	590,644	275,104	-315,540	-53.42
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	14,056	14,563	507	3.61
Այլ ծախսեր	1,649,508	1,738,671	89,163	5.41
Ասոցիացված կազմակերպություններում վնասի բաժին	(37,481)	(18,531)	18,950	-50.56
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	497,865	970,583	472,718	94.95
Շահութահարկի գծով ծախս	152,380	253,882	101,502	66.61
Տարվա շահույթ	345,485	716,701	371,216	107.45

Համաձայն աղյուսակի տվյալների, բանկի շահույթը, նախորդ տարվա համեմատ, աճել է 371.2 մլն. դրամով կամ ավելի քան 2.07 անգամ՝ կազմելով 716.7 մլն. դրամ, ընդ որում՝

- Տոկոսային եկամուտներն աճել են 1,048.8 մլն. դրամով կամ 17.0%-ով՝ կազմելով 7,236.7 մլն. դրամ, իսկ տոկոսային ծախսերն աճել են 606.6 մլն. դրամով կամ 21.0%-ով՝ կազմելով 3,501.0 մլն. դրամ: Արդյունքում զուտ տոկոսային եկամուտներն աճել են 442.2 մլն դրամով կամ 13.4%-ով՝ կազմելով 3,735.6 մլն. դրամ:
- Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն աճել են 358.3 մլն. դրամով կամ 29.9%-ով՝ կազմելով 1,558.5 մլն. դրամ, իսկ կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերն աճել են 112.6 մլն. դրամով կամ 41.3%-ով՝ կազմելով 385.4 մլն. դրամ: Արդյունքում ստացված զուտ կոմիսիոն և այլ

եկամուտներն աճել են 245.8 մլն. դրամով կամ 26.5%-ով՝ կազմելով 1,173.1 մլն. դրամ:

- Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտն աճել է 98.7 մլն. դրամով կամ 12.2%-ով՝ կազմելով 909.7 մլն. դրամ,
- Շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից զուտ օգուտն աճել է 60.4 մլն. դրամով կամ 2.8 անգամ՝ կազմելով 93.9 մլն. դրամ,
- Վաճառքի համար մատչելի ներդրումներից օգուտը նվազել է 25.5 մլն. դրամով կամ 41.7%-ով՝ կազմելով 35.6 մլն. դրամի օգուտ,
- Այլ եկամուտներն աճել են 35.2 մլն. դրամով կամ 24.0%-ով՝ կազմելով 181.8 մլն. դրամ,
- Տոկոսադիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներն աճել է 0.3 մլն. դրամով կամ 0.23%-ով՝ կազմելով 139.9 մլն. դրամ,
- Անձնակազմի գծով ծախսերն աճել են 628.6 մլն. դրամով կամ 26.8%-ով՝ կազմելով 2,972.3 մլն. դրամ,
- Հիմնական միջոցների մաշվածությունը նվազել է 315.5 մլն. դրամով կամ 53.4%-ով՝ կազմելով 275.1 մլն. դրամ,
- Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան աճել է 0.5 մլն. դրամով կամ 3.6%-ով՝ կազմելով 14.6 մլն. դրամ,
- Այլ ծախսերն աճել են 89.2 մլն. դրամով կամ 5.4%-ով՝ կազմելով 1,738.7 մլն. դրամ,
- Ասոցիացված ընկերությունների գործունեությունից առաջացել է 18.5 մլն. դրամի վնաս,
- Շահույթ մինչև հարկումն աճել է 472.7 մլն. դրամով կամ 95.0%-ով՝ կազմելով 970.6 մլն. դրամ,
- Շահութահարկի գծով ծախսն աճել է 101.5 մլն. դրամով կամ 66.6%-ով՝ կազմելով 253.9 մլն. դրամ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են բանկի հիմնական գործունեությունից ստացված եկամուտների կառուցվածքը:

Աղյուսակ 8

(հազ. դրամ)

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		2012	Տեսակարար կշիռը (%)	2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	5,173,504	83.61	6,246,994	86.32	1,073,490	20.75
2	Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	504,449	8.15	725,840	10.03	221,391	43.89
3	Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	293,394	4.74	85,677	1.18	-207,717	70.80
4	Հակադարձ ռեպո գործառնություններ	215,873	3.49	177,750	2.46	-38,123	17.66
5	Այլ տոկոսային եկամուտ	603	0.01	385	0.01	218	36.15
Ընդամենը		6,187,823	100.00	7,236,646	100.00	1,048,823	16.95

Աղյուսակի տվյալների համաձայն, բանկի տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, աճել են 1,048.8 մլն դրամով կամ 17.0%-ով՝ կազմելով 7,236.7 մլն դրամ: Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը՝ 86.3%-ը ձևավորվել է հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից, 10.0%-ը՝ արժեթղթերից, 1.2%-ը՝ ֆինանսական կազմակերպությունների հաշիվներից ստացված տոկոսներից և 2.5%-ը՝ հակադարձ ռեպո գործառնությունների հաշիվին: Ընդ որում, վարկերից և փոխատվություններից ստացված տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, աճել են 1,073.5 մլն դրամով կամ 20.8%-ով, արժեթղթերից ստացված եկամուտները՝ 221.4 մլն դրամով կամ 43.9%-ով, ֆինանսական կազմակերպությունների հաշիվներից ստացված եկամուտները նվազել են 207.7 մլն դրամով կամ 70.8%-ով, իսկ հակադարձ ռեպո գործառնություններից ստացված եկամուտները՝ 38.1 մլն դրամով կամ 17.7%-ով:

Պետք է նշենք, որ նախորդ տարվա համեմատ, վարկերից և փոխատվություններից ստացված եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտներում աճել է 2.71 տոկոսային կետով, արժեթղթերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը՝ 1.88 տոկոսային կետով, իսկ ֆինանսական կազմակերպությունների հաշիվներից և հակադարձ ռեպո գործառնություններից ստացված եկամուտների տեսակարար կշիռը նվազել է համապատասխանաբար 3.56 և 1.03 տոկոսային կետով:

Աղյուսակ 9

(հազ. դրամ)

ՈՋ ՏՈՎՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		2012	Տեսակարար կշիռը (%)	2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,200,134	51.98	1,558,460	56.08	358,326	29.86
2	Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	33,508	1.45	93,863	3.38	60,355	180.12
3	Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ օգուտ/(վնաս)	61,073	2.65	35,623	1.28	-25,450	-41.67
4	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	867,228	37.56	909,672	32.73	42,444	4.89
5	Ստացված տույժեր և տուգանքներ	103,306	4.47	128,880	4.64	25,574	24.76
6	Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	4,367	0.19	9,785	0.35	5,418	124.07
7	Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտ	4,681	0.20	10,875	0.39	6,194	132.32
8	Այլ եկամուտներ	34,326	1.49	31,778	1.14	-2,548	-7.42
Ընդամենը		2,308,623	100.0	2,778,936	100.00	470,313	20.37

Աղյուսակի տվյալների համաձայն, բանկի ոչ տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, աճել են 470.3 մլն դրամով կամ 20.4%-ով՝ կազմելով 2,778.9 մլն դրամ, ընդ որում, ոչ տոկոսային եկամուտների կառուցվածքը կրել է որոշակի փոփոխություններ: Այսպես, ոչ տոկոսային եկամուտների գերակշռող մասը՝ 56.08%-ը ձևավորվել է կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտների, 32.73%-ը՝ արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտների, 4.64%-ը՝ ստացված տույժերի և տուգանքների հաշվին: Նախորդ տարվա համեմատ, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն աճել են 358.3 մլն դրամով կամ 29.9%-ով, արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներն աճել են 42.4 մլն դրամով կամ 4.9%-ով, իսկ ստացված տույժերն ու տուգանքներն աճել են 25.6 մլն. դրամով կամ 24.8%-ով՝ կազմելով 128.9 մլն. դրամ:

Վաճառքի համար մատչելի ներդրումներից ստացված օգուտը նվազել է 25.5 մլն դրամով՝ կազմելով 35.6 մլն դրամի օգուտ՝ նախորդ տարվա 61.1 մլն դրամի դիմաց:

Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտն աճել է 60.4 մլն դրամով կամ ավելի քան 2.8 անգամ՝ կազմելով 93.9 մլն դրամ:

Թանկարժեք մետաղներով գործառնություններից ձևավորվել է 10.9 մլն դրամի եկամուտ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են բանկի հիմնական գործունեությունից ստացված ծախսերի կառուցվածքը:

Աղյուսակ 10

(հազ. դրամ)

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ		2012	Տեսակարար կշիռը (%)	2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Ընթացիկ հաշիվներ և հաճախորդներից ներգրավված ավանդներ	1,597,144	55.18	1,900,027	54.27	302,883	18.96
2	Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	694,721	24.00	542,208	15.49	-152,513	-21.95
3	Ավանդներ և մնացորդներ բանկերում	187,626	6.48	395,289	11.29	207,663	110.68
4	Հետգնման պայմանագրեր	93,258	3.22	369,140	10.54	275,882	295.83
5	Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	295,586	10.21	284,256	8.12	-11,330	-3.83
6	Այլ տոկոսային ծախս	26,099	0.90	10,102	0.29	-15,997	-61.29
Ընդամենը		2,894,434	100.0	3,501,022	100.0	606,588	20.96

Աղյուսակի տվյալների համաձայն, բանկի տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 606.6 մլն դրամով կամ 21.0%-ով՝ կազմելով 3,501.0 մլն դրամ: Բանկի տոկոսային ծախսերի 54.27%-ը կամ 1,900.0 մլն դրամը կազմել են ընթացիկ հաշիվների և հաճախորդներից ներգրավված ավանդների դիմաց վճարված տոկոսային ծախսերը, որոնք, նախորդ տարվա համեմատ, աճել են 302.9 մլն դրամով կամ 19.0%-ով:

Տոկոսային ծախսերի 15.5%-ը կամ 542.2 մլն դրամը կազմել են միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված վարկերի դիմաց վճարված տոկոսային ծախսերը, որոնք, նախորդ տարվա համեմատ, նվազել են 152.5 մլն դրամով կամ 22.0%-ով:

Հետգնման պայմանագրերի դիմաց վճարված տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 275.9 մլն դրամով կամ մոտ 4.0 անգամ՝ կազմելով 369.1 մլն դրամ կամ տոկոսային ծախսերի 10.5%-ը:

Բանկերում ավանդների և մնացորդների դիմաց վճարված տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ աճել են 207.7 մլն. դրամով կամ ավելի քան 2.1 անգամ՝ կազմելով 395.3 մլն. դրամ կամ տոկոսային ծախսերի 11.3%-ը:

ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ներգրաված վարկերի դիմաց վճարված տոկոսային ծախսերը կազմել են 284.3 մլն. դրամ կամ տոկոսային ծախսերի 8.1%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.3 մլն. դրամով կամ 3.8%-ով:

Այլ տոկոսային ծախսերը կազմել են 10.1 մլն. դրամ կամ տոկոսային ծախսերի 0.3%-ը:

Աղյուսակ 11

(հազ. դրամ)

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ		2012	Տեսակարար կշիռը (%)	2013	Տեսակարար կշիռը (%)	Աճ/նվազում	
						դրամ	%
1	Աշխատավարձ և այլ վճարներ	2,096,985	43.05	2,972,299	55.16	875,314	41.74
2	Սոցիալական ապահովագրության վճարներ	246,765	5.07	-			
3	Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	247,986	5.09	262,424	4.87	14,438	5.82
4	Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	228,345	4.69	234,612	4.35	6,267	2.74
5	Գործուղման ծախսեր	63,852	1.31	54,993	1.02	-8,859	-13.87
6	Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	118,605	2.43	104,338	1.94	-14,267	-12.03
7	Գործառնական վարձակալության գծով ծախսեր	122,032	2.50	148,764	2.76	26,732	21.91
8	Հարկեր, (բացառությամբ՝ շահութահարկի)	171,068	3.51	167,068	3.10	-4,000	-2.34
9	Խորհրդատվական և մասնագիտական ծառայություններ	17,484	0.36	28,861	0.54	11,377	65.07
10	Անվտանգության գծով ծախսեր	40,846	0.84	44,730	0.83	3,884	9.51
11	Գրասենյակային ծախսեր	92,500	1.90	81,993	1.52	-10,507	-11.36
12	Վճարված տուգանքներ	777	0.02	2,147	0.04	1,370	176.32
13	Ինկասացիոն ծախսեր	232,690	4.78	247,500	4.59	14,810	6.36
14	Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	272,851	5.60	385,398	7.15	112,547	41.25
15	Հիմնական միջոցների մաշվածություն	590,644	12.12	275,104	5.11	-315,540	-53.42

16	Ոչ նյութական միջոցների ամորտիզացիա	14,056	0.29	14,563	0.27	507	3.61
17	Ապահովագրության գծով ծախսեր	35,578	0.73	54,158	1.01	18,580	52.22
18	Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	41,578	0.85	50,533	0.94	8,955	21.54
19	Վճարված տուգանքներ	777	0.02	2,147	0.04	1,370	176.32
20	Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	91,863	1.89	111,973	2.08	20,110	21.89
21	Այլ գործառնական ծախսեր	144,304	2.96	144,577	2.68	273	0.19
Ընդամենը		4,871,586	100.0	5,388,182	100.0	516,596	10.60

Աղյուսակի տվյալների համաձայն, բանկի ոչ տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 516.6 մլն դրամով կամ 10.6%-ով՝ կազմելով 5,388.2 մլն դրամ, ընդ որում, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում, ոչ տոկոսային ծախսերի գերակշռող մասը՝ 55.16%-ը կազմել է աշխատավարձի ծախսը, որը նախորդ տարվա համեմատ աճել է 875.3 մլն դրամով կամ 41.7%-ով՝ կազմելով 2,972.3 մլն դրամ:

Հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսը նվազել է 315.5 մլն դրամով կամ 53.4%-ով՝ կազմելով 275.1 մլն դրամ կամ ոչ տոկոսային ծախսերի 5.11%-ը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսն աճել է 112.6 մլն դրամով կամ 41.3%-ով՝ կազմելով 385.4 մլն դրամ կամ ոչ տոկոսային ծախսերի 7.15%-ը:

Ինկասացիոն ծառայությունների գծով կատարված ծախսերն աճել են 14.8 մլն դրամով կամ 6.4%-ով՝ կազմելով 247.5 մլն դրամ կամ ոչ տոկոսային ծախսերի 4.59%-ը:

Գովազդի գծով ծախսերն աճել են 6.3 մլն դրամով կամ 2.7%-ով՝ կազմելով 234.6 մլն դրամ կամ ոչ տոկոսային ծախսերի 4.35%-ը:

Այլ գործառնական ծախսերն աճել են 0.3 մլն դրամով կամ 0.2%-ով՝ կազմելով 144.6 մլն դրամ կամ ոչ տոկոսային ծախսերի 2.68%-ը :

Բանկը ծառայություններ է մատուցում օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով տարիքային դասակարգումը, անկախ սոցիալական պատկանելիությունից և իրավական կարգավիճակից: Բանկի հաճախորդների կառուցվածքը բնորոշում են հետևյալ տվյալները:

Բանկի հաճախորդների թվաքանակի փոփոխությունը հաշվետու տարում արտացոլված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 12

	31.12.2012	31.12.2013	Աճ/նվազում	
			քանակ	%
Իրավաբանական անձինք	6,066	5,691	-375	-6.2
Ֆիզիկական անձինք	102,483	117,984	15,501	15.1
Ընդամենը	108,549	123,675	15,126	13.9

Աղյուսակի տվյալները վկայում են բանկի հաճախորդների կառուցվածքում տեղ գտած հետևյալ փոփոխությունների մասին.

ընդամենը հաճախորդները ավելացել են 15,126-ով կամ 13.9%-ով, այդ թվում.

- իրավաբանական անձ հաճախորդների քանակը նվազել է 375-ով կամ 6.2%-ով՝ կազմելով ընդամենը հաճախորդների 4.6%-ը,
- ֆիզիկական անձ հաճախորդների քանակն աճել է 15,501-ով կամ 15.1%-ով, կազմելով ընդամենը հաճախորդների 95.4%-ը:

Հաշվետու տարում բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համար հիմնական մրցակիցներ են հանդիսանում ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր բանկերը, բացառությամբ ԲՏԱ բանկի և Մեյլաթ բանկի, ինչպես նաև վարկային պրոդուկտների շուկայում՝ որոշ վարկային կազմակերպություններ: Մրցակցության ընթացքում հիմնական մեթոդներն են՝ բանկային նոր տեխնոլոգիաների կիրառում, մատուցվող ծառայությունների տեսակների ընդլայնում և որակի բարձրացում, ներգրավումային և ներդրումային մրցունակ տոկոսադրույքների կիրառում, ինչպես նաև ճկուն սակագնային քաղաքականության վարում:

Հաշվի առնելով բանկի կայուն զարգացման ռազմավարության շարունակականությունը, ապագա ծրագրավորվող գործունեությունը նպատակաուղղված է լինելու բանկի դիրքի ամրապնդմանը և ընդլայնմանը ՀՀ բանկային շուկայում, միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորության ուսումնասիրմանը, որը հիմնականում նախատեսում է ակտիվների հետագա կայուն աճ /կանխատեսվում է նվազագույնը 10-15%-ի տարեկան աճ/, ինչպես ներգրավված ռեսուրսների /ավանդներ, միջազգային վարկային ծրագրեր/, այնպես էլ ձևավորած շահույթի և սեփական կապիտալի հաշվին:

Բանկի առաջիկա տարիների զարգացումը մեծապես պայմանավորված կլինի նոր ինստիտուցիոնալ բաժնետիրոջ հետ ծավալվող որակական նոր մակարդակի համագործակցությամբ: Կշարունակվի EBRD հետ վարկային ծրագրին զուգահեռ ակտիվորեն իրականացվող արտաքին առևտրի ակրեդիտիվային ֆինանսավորման ծրագիրը, ինչպես նաև հիփոթեքային ծրագիրը:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր համագործակցությունը նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների, հատկապես KfW, IFC, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, Համաշխարհային Բանկի, Ասիական Զարգացման բանկի և FMO-ի հետ՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման հետ զուգահեռ առավել արագ կզարգանա հիփոթեքային վարկավորման համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև նոր ոլորտների վարկավորման ծրագրերը:

Առաջիկա ծրագրավորվող եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ստանալ տոկոսային եկամուտներ, ավելացնելով մատուցվող ծառայություններից ձևավորվող եկամուտները: Վարկերից տոկոսային եկամուտների ավելացման

ուղղությամբ կատարվում է նոր վարկային տեխնոլոգիաների ուսումնասիրում և ներդրում:

Մատուցվող ծառայություններից եկամուտների ավելացման համար իրականացվում է դրանց բազմազանում, պլաստիկ քարտերով ծառայությունների ցանկի ընդլայնում, կատարվում է անհատական պահատեղերի տրամադրում, նախատեսվում է ավելացնել բանկոմատների և սպասարկման կետերի ցանկը, զգալի արդյունքներ են ծրագրավորվում Europay և Visa վճարային համակարգի անդամությունից և միջազգային պլաստիկ քարտերի սպասարկումից, կոմունալ ծախսերի ընդունման ընդլայնումից:

Նշված խնդիրների իրականացման համար բանկը շարունակելու է տեխնիկայի պարբերական վերազինումը, ընթացակարգերի կատարելագործումը, նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը:

Բանկը, հանդիսանալով ՀՀ բանկային համակարգի կայուն օղակներից մեկը, որպեսզի առավելագույնս օգտագործի տնտեսության առկա հնարավորությունները, ապահովելով բարձր մրցունակություն ֆինանսաբանկային շուկայում, շարունակելու է մատուցել ունիվերսալ բանկային ծառայություններ:

Արդյունավետ զարգացման կարևորագույն նախապայմաններից համարելով առաջատար փորձի և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը, բանկում ընդլայնվելու է գործարկված հաճախորդների սպասարկման այնպիսի ծառայություն, ինչպիսին, օրինակ, HomeBanking համակարգն է, որը հնարավորություն է տալիս հաճախորդին բանկային ծառայությունները ստանալ առանց բանկ այցելելու: Ուսումնասիրվում և ներդրվում են ինտերնետային տեխնոլոգիաներ, հաշվի առնելով ռիսկայնությունը և ներդրման առկա հնարավորությունները:

Ընդլայնվելու են վճարահաշվարկային նոր ծառայությունների մատուցումը, պլաստիկ /ինչպես տեղական, այնպես էլ միջազգային/ քարտերով սպասարկումը, կոմունալ վճարումների ընդունումը և այլն: Բանկը նախատեսում է նաև թողարկել նոր կուտակային վճարային պլաստիկ քարտեր (տոկոսադրույքի կապիտալացման հնարավորությամբ), ներդնել վարկային քարտի պրոդուկտը (վարկային գծի առկայությամբ), որի միջոցով քարտատերերը կկարողանան կատարել անկանխիկ գործարքներ առևտրի կենտրոններում և որպես Բանկի քարտատեր ստանալ անհատական զեղչեր այդ առևտրի կենտրոններում, որոշակի սպասարկման ոլորտների հետ թողարկել համատեղ քարտեր, որի միջոցով քարտատերերը տվյալ սպասարկման կետերից որոշակի արտոնություններից օգտվելու հնարավորություն կստանան, ընդլայնել ֆակտորինգային գործառնությունները:

Տարածքային քաղաքականության շրջանակներում կշարունակվի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը, նպատակ ունենալով ապահովել բանկի ներկայությունը հանրապետության ողջ տարածքով, ինչպես նաև գործող մասնաճյուղերի վերակառուցումն ու վերանորոգումը: Կզարգանա գործունեությունը Ռոյտերս և Բլումբերգ համակարգերով:

Հիմնական բացասական գործոնները, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել բանկի գործունեության վրա՝ քաղաքական-տնտեսական գործընթացներն են՝ երկրի տնտեսության հետագա զարգացման միտումները, պետության վարած դրամավարկային քաղաքականության հնարավոր տատանումները, հարկային քաղաքականության փոփոխությունը, որը կազդի գործարար ակտիվության վրա,

ինչպես նաև օրենսդրական դաշտը՝ կապված բանկային գործունեության կարգավորման հետ:

Նշված ռիսկերը մեղմելու համար բանկը շարունակելու է վարել հավասարակշռված ներգրավումային և ներդրումային քաղաքականություն, հնարավորինս կանխատեսելով զարգացման միտումները, դիվերսիֆիկացնելով ռիսկը, ընդլայնելով ծառայությունների ցանկը, խուսափելով վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացումներից:

Բանկի համապատասխան մասնագիտական ստորաբաժանումը մեծ ուշադրություն է դարձնում բանկային նոր ծրագրերի ներդրման, գործող ծրագրերի կատարելագործման խնդիրներին: Բանկում նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը կրում է ծրագրավորված բնույթ: Ըստ առանձին բանկային ծառայությունների ոլորտների, ուսումնասիրվում է առաջատար համաշխարհային փորձը, կատարվում է մարքեթինգային ուսումնասիրություն դրա նկատմամբ, ապահովվում է ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման հստակ ընթացակարգերի մշակումը՝ իրականացնելով նաև ներդրման փորձաքննություն:

Բանկում մշտական աշխատանքներ են ծավալվում նոր ծառայությունների, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ, հաշվի առնելով հաճախորդների հարցումների արդյունքները: